

ՕՐՆԵԱԼ Է ԱՍՏՈՒԱԾ

Հաստ ու անյոյս մութին մէջ փայլող լոյսին մէջ անճար
 Զըլացումէն վերջ երկար, եւ մեծ քէնէս ետք՝ Աստուած,
 Ահա կոյրի աչքերս են, որոնք յանկարծ կը բացփին:
 Ողորմութեամբ քու անբաւ խոնարհութիւնս կ'արթըննայ,

Կը լուայ զիս, կը սաքրէ, քու յուսաբեր գաղտնիքիդ
 Խորհուրդին մէջ հայրական: Ու ես կը զգամ վերջապէս
 Թէ որդիդ եմ անառակ թէւ անճար, եւ ըմբոստ,
 Որուն համար ունիս սէր եւ դեռ անշուշտ՝ նըպատակ:

Երբ կոյր էի քեզ անէծք տուի ցափս փոխարէն:
 Քանի՛ դուն զիս փորձեցիր՝ ա՛յնքան ես քեզ ուրացայ:
 Հըպարտութեան զէնքերով մաքառեցայ կամքիդ դէմ.

Եւ ամէն օր անելի խաւարին զոհը դարձայ:
 Չը թուեցաւ ինձ երբէք՝ թէ քու սիրոյդ հասնելու
 Այս էր միակ ինձ համար գըծած դըժուար քու ճամբան:

ԱՆԵԼ